

ՄԻ ՔԱՆԻ ԾԱԾԿԱԳՐԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒԹՅՈՒՆ

Պրոֆ. Ա. Գ. ԱՅՐԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ ՊԵՏ. Մատենադարանը 1958 թ. սեպտեմբերի 9-ին լեհինականի բնակիչ Մանուկ Արաքյանից գնել է փոքրիկ մի ձեռագիր, որը թեպետ նոր գրչություն ունի, բայց մեծ արժեք է ներկայացնում քիմիայի, մասնավորապես հայ արհեստագործության պատմության համար:

Այս ձեռագիրը, ըստ վաճառողի հայտարարության, առաին համաշխարհային պատերազմի տարիներին բերվել է Ալաշկերտից: Նա գրված է «Ի թուին Հայոց ՌՄԿԳ և յամի տեառն 1814, նոյեմբերի Բ (2) օրն»: Ձեռագրի գրիչն է Ավետիք Բաղիշեցին, որը հայտնի է և Սալաձորցի մականունով: Նա իր անունը գաղտնագրել է ձեռագրի տիտղոսաթերթում «գավազանագիր» կոչվող ծածկագրով¹: Ստորև բերում ենք ծածկագիրը և նրա վերծանությունը:

Կ Փ Դ Կ Դ Դ
Ա Լ Ե Տ Ի Բ

1. «Ավետիք» անվան ծածկագրությունը
և նրա վերծանությունը

Ավետիք Բաղիշեցին, ինչպես երևում է իր բնօրինակած ձեռագրից, ծածկագրության մեծ սիրահար է եղել. նա ծածկագրել է ոչ միայն իր անունը, այլև իր բնօրինակած բնագրի մեծ մասը, քիմիայի ողջ բաժինը, որը սկսվում է թերթ 6 ա-ից և վերջանում 19 բ-ով:

ՊԵՏ. է ասել, որ միջին դարերում արհեստագործությանը և քիմիային վերաբերող բնագրեր ծածկագրելը սովորական երևույթ է եղել: Արհեստագործ վարպետն ամեն կերպ աշխատել է արհեստի մենաշնորհն իր ձեռքում պահել և գաղտնիքն ուրիշին չտալ, իսկ եթե ինչ-ինչ պատճառով հարկադրված է եղել որևէ բան գրի առնել, ապա այդ արել է միայն իր ժառանգի կամ հավատարիմ աշակերտի համար, և որպեսզի իր գրածը մատչելի չլինի ուրիշին, նա գրել է ծածկագիր: Այս տեսակետից ուշագրավ է միջնադարյան վարպետներից մեկի՝ իր աշակերտին տված հանձնարարությունը, որը գրի է առնված ալքիմիական բովանդակությամբ մի ձեռագրում. ուսուցիչն աշակերտին սովորեցնում

¹ «Գավազանագիր» ծածկագրի բանալին մենք հրատարակել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ (տե՛ս էջ 199):

է, թե ինչպես կարելի է մետաղին ոսկու գույն տալ, ապա զգուշացնում է, թե դադտնիքն «ամէն մարդու մի ասեր»¹:

Մի այլ ալքիմիկոս, խոսելով այն մասին, թէ ինչու համար են վարպետները ծածկագիր գրում արհեստագործական բնագրերը, հետևյալ պատճառաբանությունն է տալիս. «Վարպետք և երգողք արուեստիս այս, մթին և տարակուսանօք խօսեցեալ են, զի եթէ յայտնի խօսեցեալ էին, ամենեքեան իմանային և ուսանէին, և արուեստս այս անարժան լինէր: Եւ կամ պատճառ մի այլ կալ, զի մի՛ ոք զկնի իմաստասիրացն ընթեռնոյր, և իմանայր, և ուսանէր, և վասն նախանձու այրէր կամ կորուսանէր և զինքն իմաստուն ցուցանէր»²:

Ավետիք Բաղիշեցու արհեստագործական այս աշխատությունը, որը, հավանական է, ուսուցման ձեռնարկ է հանդիսացել, ունի հետևյալ տիտղոսաթերթը. «Իիրք արուեստականաց հրահալից, որ է քիմիայից, սահմանեալ ի նախկին փրիսոփայից ի վերայ եօթն մոլորականաց աստեղաց: Փողովեալ եղև այժմ ի բանասիրէ յումեմնէ Աւետիք վարդապետէ Բաղիշեցոյ, որ ասի Սալաձորցի, ի հայրապետութեան գերագահ աթոռոյն ամենայն Հայոց տեառն նիրեմ կաթողիկոսի ամենայն Հայոց»: Ձեռագիրը թուղթ է, ունի 21,2×10 սանտ. մեծություն, բաղկացած է 78 թերթից, գրված է միասյուն նոտր գրով, վիճակը բավարար է: Նա գրանցված է Մատենադարանի № 9758-ի տակ:

Ավետիք Բաղիշեցու արհեստագործական բովանդակությամբ այս ձեռագիրը, բացի վերնագրերից, ամբողջությամբ դադտնագրված է «բժշկական» կոչվող ծածկագրով: Նա «բժշկական» է կոչվում այն պատճառով, որ այս խմբի ծածկագրերն ընդհանրապես շատ են մեզ հանդիպում բժշկական բովանդակությամբ ձեռագրերում:

«Բժշկական» կոչվող ծածկագրության մասին ժամանակին հանգամանորեն խոսել է ակադ. Հ. Աճառյանն իր «Հայոց գրերը» խորագրով աշխատության մեջ: Դժբախտաբար, մեծանուն հայագետին հայտնի է եղել այս ծածկագրության այբուբենի նշանագրերի մի մասը միայն, այդ պատճառով նրա աշխատության հավելվածում զետեղված աղյուսակից պակասում են բ, ը, թ, ժ, խ, ծ, հ, ճ, չ, ջ, ո, և, օ տառերի նշանագրերը: Ակադ. Աճառյանը տեղեկություն է ունեցել, որ բնյրութարնակ հայ ոսկերիչ-արհեստավորներից ոմանց մոտ կա այս ծածկագրության լրիվ բանալին, որոնք օգտագործում են այն, և նա, իր բարեկամներից մեկի միջոցով, փորձել է հայ արհեստավորներից ստանալ պակաս տառերի նշանագրերը, սակայն այդ նրան չի հաջողվել, որովհետև ծածկագիր օգտագործող արհեստավորները, ըստ Աճառյանի Բեյրութից ստացած տեղեկության, «իրենց վարպետին երդում տված են եղել, ուստի ծածկագրին դադտնիրը երևան չեն հաներ»³:

«Բժշկական» ծածկագրության այբուբենի պակասող նշանագրերը, Հայկ. ՈՍՌ. Պետ. Մատենադարանի մեզ հայտնի բնագրերի հիման վրա մենք լրացրել և հրատարակել ենք մեր «Հայ գրի և գրչության պատմության» մեջ⁵:

1 Կ. Ղ ա ֆ ա դ ա Ր յ ա ն, Ալքիմիան պատմական Հայաստանում, Երևան, 1940, էջ 15:

2 Նույն տեղում:

3 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 334:

4 Տե՛ս Երրորդ հավելվածը:

5 Ա. Ա ր ր ա հ ա մ յ ա ն, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 221:

Ավետիք Բաղիշեցու գործածած «բժշկական» ծածկագրության նշանագրերը, սակայն, փոքր-ինչ տարբերվում են մեղ հայտնի և հրատարակված նշանագրերից, ուստի անհրաժեշտ ենք համարում նախ բերել այդ այբուբենի բանալին, որը մենք կազմել ենք Բաղիշեցու ծածկագիր բնագրի հիման վրա:

Յ - Ա	Դ - Խ	Ը - Զ
Է - Բ	Ձ - Ծ	Ծ - Դ
Զ - Գ	Կ - Կ	Զ - Զ
Դ - Դ	Յ - Հ	Դ - Դ
Ե - Ե	Ֆ - Զ	Օ - Ս
Զ - Զ	Ղ - Ղ	Վ - Վ
Ե - Ե	Ծ - Ճ	Ց - Տ
Ը - Ը	Կ - Ս	Ր - Ր
Թ - Թ	Գ - Յ	Վ - Յ
Ձ - Ժ	Ե - Ն	Օ - Ի
Բ - Ի	Ղ - Շ	Կ - Փ
Լ - Լ	Օ - Ո	Կ - Ք

2. Բաղիշեցու ծածկագրության բանալին

Ավետիք Բաղիշեցու աշխատությունը բաղկացած է ավելի քան 60 գլուխներից: Նա սկսում է ջրի թորմանը նվիրված հատվածով, որն ունի «Պատրաստումն ջրոց այսպէս» խորագիրը: Նրան հետևում են «Լուացումն աղի, զոր գործածեմք, որ ասի աղբ հանայից» և «Լուացումն նշատրի» վերնագրերով հատվածները: Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել այդ երեք հատվածները և նրանց վերծանությունը:

ՄԱՅՐԱՅՈՒՆԻ ԶՐՈՅ ԱԶՈՅԻՆ
 Առ զՅՐԵՄԻԱՅ ԵՄԵՆԻ ԵՄԵՆԻ
 ԶԻ ԵՄԻ ԵՄԵՆԻ ԵՄԵՆԻ ԵՄԵՆԻ
 ԶՐԵՄ ԱՅԻ ԱՐՅԵՆՈՅԻ:

3. Առաջին հատվածի ծածկագիրը

Վերծանությունը.

«Պատրաստումն ջրոյ ալսպէս:
Ան զջուրն անձրեաց, և եփի լաւ
մի պան և ապա դիր երաւագն և ապա
գործ ան, արհեստիս»:

Ան չձօնարու և ղոն չոր օտէ՛ք և
է՛ք է ջուրն օր չէ՛ք և և՛ն է՛ք և՛ն
եփե՛ք և և՛ն օր ճաշէ՛ք և օ՞րէ՛ք
և՛ն դէ՛ք եփէ՛ք է՛ք և և՛ն յեփէ՛ք
գէ՛ք:

1. Երկրորդ հատվածի ծածկագիրը

Վերծանությունը.

«Ան գնատարակ աղն, զոր ռաւմի և
լից ի ջուրն, որ հալի, և ապա մի պան
եփի և քող որ պարզի և սուզմիշ
արա, դիր որ եփի մինչև դարձցի կրկին
լաղ»:

Ան չէ՛ք օրէ՛ք օրէ՛ք օրէ՛ք
ջուրն է՛ք և չէ՛ք ղեփե՛ք ջուրն և
և՛ն օր է՛ք և՛ն եփէ՛ք և և՛ն դէ՛ք
և՛ն օր օրէ՛ք և և՛ն է՛ք է՛ք
օր է՛ք և և՛ն եփէ՛ք և՛ն օր է՛ք
և՛ն է՛ք և է՛ք է՛ք օրէ՛ք և և՛ն
և՛ն օր օրէ՛ք և և՛ն օրէ՛ք
և՛ն օրէ՛ք:

5. Երրորդ հատվածի ծածկագիրը

Վերծանությունը.

«Ան լավ նշատուն, որ լիցի նման
շուշալի, և հալի լիփեալ ջուրն, և
քող որ մի պան եփի, և ապա դիր հո-
տագն որ պարզի, և ապա մամլի էլէլով
որ մաքի, և ապա եփի ալեւափ, որ մինչև
ցամաքի, և լից ի սպիտակ և մաքուր
նշատու լուացեալ և մաքեալ լաղտե-
ղութենէ»:

Բացի «բժշկական» այս ծածկագրերից, բնագրում մեկ-մեկ պատահում են նաև մետաղների գաղափարադրեր, որոնք հայտնի են հայագիտության մեջ, և նրանց բանալին հրատարակված է:

Ծածկագրության հաջորդ զլուխները գործնական խորհուրդներ են պարունակում ոսկու, արծաթի, երկաթի, պողպատի, պղնձի և այլ մետաղների կամ նրանց համաձուլվածքների գործածության եղանակների մասին և այլն:

Ձևագրի առաջին էջի վրա բերված են արհեստագործության մեջ օգտագործվող մի շարք գործիքների նկարներ: Դրանք շատ են նմանվում Մատենադարանի N 6928 ձևագրում եղած քիմիական գործիքների նկարներին, որոնք հրատարակել է պրոֆ. Տ. Ղազանչյանը¹:

Սակայն մեծ նմանություն կա ոչ միայն Ավետիք Բաղիշեցու և Մատենադարանի N 6928 ձևագրերի նկարների միջև, այլև նրանց բնագրերում: Մեզ թվում է, երկրորդը ընդօրինակված է առաջինից և ամբողջապես նրա վերածանությունն է: Այս բնագրերը մեծ արժեք ունեն քիմիայի և արհեստագործության պատմության համար և արժանի են լուրջ ուշադրության:

* * *

Բանասեր Գարեգին Սրվանձտյանը իր «Խորոս աղբարի» առաջին դրքում հրատարակել է Զիլի քաղաքի հայկական եկեղեցու երբեմնի սեփականություն հանդիսացող 1465 թ. քնդորինակված մի ձևագրի հիշատակարանի հետևյալ ծածկագրությունը.

«Ձմեռեալս հողւով լիշեա ով ժառանգող
Ե Դ Տ Լ Դ Լ Տ
Յ Խ Խ Ի Ս Ի Ս Ի Ն, որ ԶԺԴ թուականին
ծնալ գտառս ի գեօղն, որ կոչի Պալկին»:

Սրվանձտյանն այս ծածկագիրը չի կարողացել վերծանել²: Այս նույն ծածկագիրը վերահրատարակել է պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը «Ժեղարի հայերեն ձևագրերի հիշատակարանների» երկրորդ մասում, տողատակ ծանոթագրության մեջ նշելով. «Այս ծածկագիրը մեզ հաջողվեց վերծանել»³:

Մեր ուսումնասիրությունից պարզվեց, որ ծածկագրության վերը բերված հատվածում կա երկու ծածկագիր նշանների և երկու հայկական սովորական բառերի աղավաղում:

1. Երկրորդ տողում եղբայրացիր ծածկագրի մեջ «լ» տառը պետք է եղած լինի «շ»: Այս տառերը բոլորագրերում իրար նման են և հաճախ են շփոթվում:

2. Սյունացիր ծածկագրության ձախից երրորդում, դրչի կամ զուցե բանասեր Սրվանձտյանի մեղքով, սյունադժերի մոտ մեկ կետ բաց է թողված. երեք կետի փոխարեն պետք է եղած լիներ չորսը:

¹ Տե՛ս նրա «Քիմիական ապարատուրան և լաբորատորական տեխնիկան ըստ հայկական ձևագրերի» (Հայկ. ՍՍԽ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու», հատ. 2, Երևան, 1955, էջ 3—28):

² Գ. Վ. Սրվանձտյան, Խորոս աղբար, մասն առաջին, Կ. Պոլիս, 1879, էջ 77:

³ Լ. Խաչիկյան, Ժեղարի հայերեն ձևագրերի հիշատակարաններ, մասն Բ, Երևան, 1958, էջ 241:

ուերը «ԴԲԻՇՅՎՐԻԲԴԸՇՎ» ծածկագրված են «Եղբայրագրով»։ Նրանք ճիշտ վերծանել է Լ. Խաչիկյանը—«Գալուստ, Ջաղէոս»։ Դժուար է միայն համաձայնել Խաչիկյանի առաջարկության հետ՝ երկրորդ բառամիջի «դ» տառը «փ»-ով փոխարինելու մասին, որովհետև, մեր կարծիքով, «Ջաղէոս» անունը զաղտնագրված է եղել «Ջաղէոս» ուղղագրությամբ, ուստի օրինական կլինի թողնել բնագրի «դ» տառը։

Առաջին տողի վերջին չորս տառերը՝ «ՌՌ. ՄՄ» «դումարգիր» ծածկագրով է, «ՌՌ»-ն հավասար է «ս»-ի, իսկ «ՄՄ»-ն՝ «ն»-ի։

Երկրորդ տողի «Ծ Զ Չ Ֆ» տառերը զաղտնագրված են «Եղբայրագրով» և վերծանվում է «մկուլ» ձևով։ Այստեղ ծածկագրության մեջ պակասում է «լ» տառը, սակայն նա որպես մոռացված տառ, բացթողման նշանակետերով, բերված է ծածկագրության ներքևում աջից։ Վերջին «Ֆ» տառն այստեղ ունի «փ»-ի իմաստը, որովհետև «Ֆ» տառը հետո է մուտք գործել հայկական այբուրենի մեջ և երբեք ծածկագրությունների մեջ չի գործածվում։

Երկրորդ «սյունակետագիր» ծածկագրությունը մեզ տալիս է աղբյուրագրատական երկու նորություն, առաջին՝ որ նրա կետերը դրված են ոչ թե սյունագծերի աջ կողմերում, ինչպես ընդունված է, այլ ձախից, բացառությամբ մեկից, և երկրորդ՝ առաջին և երկրորդ սյունագծերի մեջ դրված մեկ կետը ծառայում է միաժամանակ և՛ առաջին, և՛ երկրորդ սյունագծերին։

Այսպիսով, նշված ծածկագրությունը վերծանվում է.

«ԴԲԻՇՅՎՐԻԲԴԸՇՎ. ՌՌ. ՄՄ.

Գալուստ, Ջաղէոս. Սն—

Ճ հ չ փ լ : : : : :

մ կ ո լ : : : : լ ա ճ ի գ ս :

Վերև բերված ամբողջ տեքստը կկարդացվի. «Արհնեալ է արարիչն աստուած, որ զմեզ բարով թափեց ի յէս դրքէս, հաղար բոունք, պոծանք. Գալուստ, Ջաղէոս, Ս[խ]ն[ա]մկուլ լաճիգս»։

Սինամ անունը, ահադ. Զ. Աճառյանի կարծիքով, «Սենեքերիմ» անվան կրճատ ձևն է¹։ Նա հանդիպում է մեզ 1534 թվականին ընդօրինակված մի ձեռագրում²։ «Ղուլ» բառն ունի «ծառայ» իմաստը։ Ինչ վերաբերում է «լաճ» բառին, որդի իմաստով, այն գործ է ածվել հայկական «Սսկեփորիններում»³ «Լաճիկ» բառն ունի փոքր լաճ, տղեկ իմաստը⁴։

* * *

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների» երկրորդ մասում հրատարակել է Պետական Մատենադարանի N 6261 ձեռագրի հիշատակարանը, որը դրված է Վայոց Ձորի երեքուկ (ներկայիս Հերհեր) գյուղում, 1460 թ., Խաչատուր գրչի կողմից։ Հիշատակարանն ունի չորս տողից բաղկացած ծածկագրություն, որը հրատարակիչը թողել է առանց վերծանության։

1 Զ. Աճառյան, Հայաստանի անձնանունների բառարան, հատ. Գ, էջ 529։

2 Ե. Լալայան, Վասա. ձեռ. ցուցակ, էջ 649։

3 «Նոր բողոքի հայկազեան լեզուի», Ա. հատ., էջ 877։

4 Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, II հատ., էջ 181։

РАСШИФРОВКА НЕСКОЛЬКИХ ТАЙНОПИСЕЙ

Проф. А. Г. АБРАМЯН

(Р е з ю м е)

В 1958 г. дирекция Матенадарана приобрела одну интересную рукопись, содержащую текст по химии, написанный тайнописью. Засекреченный текст расшифровывается так называемой «агванской тайнописью». В статье приводится ключ этой тайнописи и расшифровка нескольких абзацев текста.

Известный армянский филолог Г. Срванзтян в своей работе «Торос ахпар» («Дядя Торос») опубликовал тайнопись, но не мог расшифровать ее. Из нашей расшифровки текста выяснилось, что в тайнописи засекречено имя переписчика — Григора Карбеци.

Кандидат исторических наук Л. Хачикян во втором томе «Памятных записей» опубликовал тайнопись рукописи Матенадарана № 6268, написанной в 1747 г., расшифровав два ее слова. Нами выяснено, что в нерасшифрованной части засекречены имена «Санамгул» и «Сынок». В той же книге опубликована тайнопись рукописи Матенадарана № 6261, написанной в 1460 г. Из нашего исследования выяснилось, что в тайнописи имеется много искажений, которые затрудняют расшифровку. Расшифровка осложняется и тем, что тайнопись нужно открывать не одним, а двумя ключами. Нами сделана попытка ее расшифровки. Текст расшифровки предположителен.